ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ---------- 2021թ. N ----- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂՈՏԱ Հ. 54/2 ՇԵՆՔԻ Հ.42 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ գլխի հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 315-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Արշակունյաց պողոտա հ.54/2 շենքի հ.42՝55.92քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.06022017-01-0099 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Լիլիթ, Գևորգ և Գոռ Խաչատուրյաններին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂ. Հ.54/2 ՇԵՆՔԻ Հ.42 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լիլիթ Խաչատուրյանը դիմել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարին՝ Արշակունյաց պող. հ.54/2 շենքի հ.42՝ 55.92քմ ընդհանուր մակերեսով բնակարանը մասնավորեցնելու խնդրանքով:

Ներկայումս նշված հասցեում գտնվող բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N06022017-01-0099 վկայականի հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Համաձայն Շենգավիթ վարչական շրջանի «Շենգավիթ» համատիրության կողմից 01.03.2021թ հ. 31 տեղեկանքի՝ Լիլիթ Խաչատուրյանը 1995թ.-ից, Գևորգ Խաչատուրյանը 1996թ.-ից, Գոռ Խաչատուրյանը 2004թ.-ից բնակվում են նշված հասցեում, իսկ բնակչության պետական ռեգիստրի հաշվառման մասին տրված 22.02.2021թ. տեղեկանքների Լիլիթ Խաչատուրյանը 2011թ., Գևորգ Խաչատուրյանը 2012թ., Գոռ Խաչատուրյանը 2013թ. հաշվառված են նշված բնակարանում:

Արշակունյաց պող. հ.54/2 շենքի հ.42 բնակարանը հատկացված է եղել Լիլիթ Խաչատուրյանի ամուսնու հորը՝ Գարեգին Մկրտչյանին, նրա կնոջը՝ Մանուշակ Սարգսյանին և որդուն՝ Գարեգին Մկրտչյանին: Մանուշակ Սարգսյան շրջսովետի գործադիր կոմիտեի հ. 59 օրդերով, իսկ Լիլիթ Խաչատուրյանի ամուսինը ծնվել է օրդերը տրամադրելուց հետո՝ 1968 թվականի սեպտեմբերին, ուստի չի ներառվել օրդերում:

Վերոհիշյալ անձանց մահվան պատճառով քննարկվող բնակարանը չի մասնավորեցվել:

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Շենգավիթ անձնագրային բաժանմունքի 18.02.2021թ. կողմից տրված հ.8//1-548 գրության համաձայն՝ Արշակունյաց պողոտա հ.54/2 շենքի հ.42 բնակարանում Լիլիթ Խաչատուրյանը հաշվառված է՝ 2011 թվականից, Գևորգ Խաչատուրյանը՝ 2012 թվականից, Գոռ Խաչատուրյանը՝ 2013 թվականից:

ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման ղեկավարի 27.03.2019թ. N ԱՏ-25/03/2019-4-0077, 28.03.2019թ. N ԱՏ-26/03/2019-4-0002, 29.03.2019թ. N ԱՏ-27/03/2019-4-0009 գրությունների տրված տեղեկանքների՝ համաձայն Լիլիթ Խաչատուրյանի, Գևորգ Խաչատուրյանի և Գոռ Խաչատուրյանների անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և վերջին հինգ տարիների ընթացքում վերջիններիս կողմից անշարժ գույքի օտարում և գրանցում չի կատարվել:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 315-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքները, ուստի ք. Երևան, Արշակունյաց պող. հ.54/2 շենքի հ.42՝55.92քմ հասցեում գտնվող գույքի անհատույց օտարման համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂՈՏԱ Հ.54/2 ՇԵՆՔԻ Հ.42 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Արշակունյաց պողոտա հ.54/12 շենքի հ.42 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂՈՏԱ Հ. 54/12 ՇԵՆՔԻ Հ. 42 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համյանքի սեփականություն համարվող Արշակունյաց պողոտա հ.54/12 շենքի հ.42 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ